

Մաթեմատիկա - I փուլ 6-րդ դասարան, 150 րոպե

1. Հաշվել $\left(1 + \frac{1}{4}\right) \left(1 + \frac{1}{5}\right) \left(1 + \frac{1}{6}\right) \left(1 + \frac{1}{7}\right)$ արտահայտության արժեքը:

- 1) 1 2) $\frac{3}{2}$ 3) 2 4) 3

2. Ո՞ր թիվն է 24-ով փոքր իր եռակիից:


- 1) 8 2) 12 3) 16 4) 24

3. Հեծանվորդն անցավ ճանապարհի 40%-ը, որից հետո նրան մնաց անցնելու 24 կմ-ով ավել ճանապարհ, քան արդեն անցել է: Որքա՞ն է կազմում ճանապարհի երկարությունը:

- 1) 120կմ 2) 80կմ 3) 40կմ 4) այլ պատասխան

4. Ո՞ր արտահայտությունն է ճիշտ արտահայտում թե ինչպես հաշվել նկարում պատկերված պատկերի պարագիծը:

- 1) $2 \cdot 4 + 2 \cdot 8$ 2) $2 \cdot 8 + 4 \cdot 4$ 3) $4 \cdot 8 + 8 \cdot 4$ 4) $4 \cdot 4 + 8$



5. Ուղիղ գծի վրա նշված են 6 տարբեր կետեր: Քանի՞ հատ հատված կա, որոնց ծայրակետերն այդ կետերից են:

- 1) 30 2) 21 3) 15 4) 5

6. “Մաթեմիկոս” կազմակերպության աշխատողները հյուր արտադրող գործարանից պատվիրեցին 150 շիշ հյուր: Գործարանը հյուր մատակարարեց արկղերով, որոնցից յուրաքանչյուրում տեղավորվում է 12 շիշ հյուր: Որքա՞ն գումար պետք է վճարեն “Մաթեմիկոսի” աշխատողները եթե մեկ շիշ հյուրն արժե 40 դրամ, իսկ մեկ արկղը՝ 240 դրամ:

- 1) 9120 2) 8880 3) 9080 4) այլ պատասխան

7. Մրցույթի ժամանակ աշակերտին տրվեց 30 հարց: Յուրաքանչյուր հարցին ճիշտ պատասխանելու համար նրա միավորները շատանում էին 12-ով, իսկ սխալ պատասխանի դեպքում՝ քչանում 8-ով: Մրցույթի սկզբում նա ուներ 0 միավոր, իսկ բոլոր հարցերին պատասխանելուց հետո պարզվեց, որ նա ունի 160 միավոր: Քանի՞ հարցի է ճիշտ պատասխանել աշակերտը:

- 1) 22 2) 10 3) 18 4) 20

8. Իրարից տարբեր չորս բնական թվերի գումարը հավասար է 36: Գտնել այդ թվերից ամենամեծի հնարավոր ամենափոքր արժեքը:

- 1) 9 2) 10 3) 11 4) այլ պատասխան

9. Հանման գործողության մեջ չորս հատ թվանշան ջնջված է: Գտնել ջնջված թվանշանների գումարը (տես նկարը):

- 1) 18 2) 19 3) 20 4) 21

$$\begin{array}{r} 6732 \\ \square\square\square 6 \\ \hline 209\square \end{array}$$

Մաթեմատիկա - I փուլ 6-րդ դասարան, 150 րոպե

10. Որևէ ամսում կա երեք հատ կենտ ամսաթիվով կիրակի: Շաբաթվա ի՞նչ օր է այդ ամսվա 12-ը:

- 1) երեքշաբթի 2) չորեքշաբթի 3) ուրբաթ 4) հնարավոր չէ ասել

11. 217 մետր երկարություն ունեցող գնացքը բաղկացած է 7 մարդատար և 20 բեռնատար վագոններից: Մարդատար վագոնը 4 մետրով երկար է բեռնատար վագոնից: Որքա՞ն է մարդատար վագոնի երկարությունը:

- 1) 11 2) 9 3) 7 4) 3

12. Դարակում կա 7 հատ սպիտակ, 8 հատ կապույտ և 5 հատ սև գնդիկ: Առանց նայելու քանի՞ գնդիկ է պետք վերցնել դարակից, որ նրանց մեջ լինեն բոլոր գույնի գնդիկներ:


- 1) 13 2) 16 3) 20 4) այլ պատասխան

13. Պարզել օրվա ժամը, եթե հայտնի է, որ կեսօրից անցել է 4 անգամ ավելի շատ ժամանակ, քան մնացել է օրվա ավարտին:

- 1) առավոտ 09:36 2) առավոտ 09:00 3) 21:00 4) 21:36

14. Գտնել նկարում պատկերված պատկերի մակերեսը:

- 1) 792 2) 576 3) 495 4) 567



15. Դասարանի 32 աշակերտներից 24-ը սիրում ֆուտբոլ, 12-ը սիրում են բասկետբոլ, իսկ 9-ը սիրում են և՛ ֆուտբոլ և՛ բասկետբոլ: Դասարանի աշակերտներից քանի՞ սը չեն սիրում ո՛չ ֆուտբոլ, ո՛չ բասկետբոլ:

- 1) 19 2) 9 3) 5 4) 2

16. Դարակում հնարավոր է շարել 35 հատ հաստ գիրք, կամ 65 հատ բարակ գիրք: Քանի՞ հատ բարակ գիրք է հնարավոր ավելացնել դարակում, եթե այնտեղ արդեն կա 14 հատ հաստ գիրք:

17. 65 մարզիկներից բաղկացած թիմը ժամանում է հյուրանոց: Հյուրանոցում կան միայն 3 և 4 տեղանոց համարներ: Ամենաքիչը քանի՞ սենյակ պետք է վերցնել, մարզիկներին տեղավորելու համար (սենյակները պետք է ամբողջությամբ զբաղեցվեն):

18. Գտնել 3, 7, 19, 55, ... հաջորդականությունում գրված թվերի օրինաչափությունը և գտեք հաջորդ թիվը:

19. Քանի՞ հատ երկնիչ թիվ կա, որոնց թվանշաններից մեկը կենտ է, իսկ մյուսը գույգ:

20. Իրար հետևից գրված են 1-ից մինչև 1000 բոլոր թվերը: Ո՞ր թվանշանն է գրված 2016-րդ դիրքում: